

**ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Իրավական պետության մեջ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների անհրաժեշտ կողմերից մեկը դրանց պաշտպանությունն է պետական մարմինների անօրինական գործողություններից: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ իշխանական գործողությունների կատարումը վնասի պատճառման մեծ վտանգ է ներկայացնում: Այս համատեքստում չափազանց կարևոր նշանակություն է ձեռք բերում պետական մարմինների գործողություններով (այդ թվում՝ վարչարարությամբ) պատճառված վնասի հատուցմանն առնչվող հարցերի իրավական պատշաճ կարգավորումը:

Հայաստանի Հանրապետությունում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավական կարգավորմանն են ուղղված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ է մտել 01.01.1999 թ.) և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 18.02.2004 թ., ուժի մեջ է մտել 31.12.2004 թ.): Մասնավորապես, պետական մարմինների ապօրինի գործողություններով պատճառված վնասի հատուցմանն են վերաբերում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 18-րդ, 1063-րդ և 1064-րդ հոդվածները, իսկ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) ամբողջ 7-րդ բաժինը համապարփակ կարգավորման է ենթարկում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները: Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքն ամրագրված է թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, թե՛ Օրենքով: Մակայն, դրա հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ պետական մարմինների գործողությունների հետևանքով հասցված վնասի հատուցում ստանալու իրավունքի միաժամանակյա ամրագրումը տարբեր բնույթ (մասնավոր-իրավական և հանրային-իրավական) ունեցող օրենսդ-

¹ ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ Ի. Գ. թ., դոցենտ Ռ. Հ. Եղյան:

րական ակտերում որոշակի տարընթերցում է առաջացնում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտի իրավական բնույթի վերաբերյալ:

Իրավաբանական գրականության մեջ այս հարցի շուրջ գոյություն ունեցող տեսակետները բաժանվում են երեք հիմնական խմբի: Առաջին խմբի հեղինակները վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը դիտում են որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց², հեղինակների երկրորդ խումբը այն համարում է միջձյուղային իրավական ինստիտուտ³, իսկ երրորդ խմբի կողմնակիցների դիրքորոշման համաձայն՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը պետք է իրականացվի հանրային-իրավական հիմքերից ելնելով⁴: Երրորդ տեսության կողմնակիցներից է, օրինակ, Ա. Ա. Պոդոպրիգորան, որը վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը համարում է ոչ թե իրավաբանական պատասխանատվության, այլ իրավունքի պաշտպանության միջոց:

Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտի իրավական բնույթի վերաբերյալ հակասական տեսակետների առկայությունը հաշվի առնելով՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավական հիմքերը բացահայտելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում պարզաբանելու իրավաբանական պատասխանատվության և իրավունքի պաշտպանության միջոցների հարաբերակցությունը, ինչը հստակություն կմտցնի վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը քաղաքացիաիրավական պատասխանատվության կամ իրավունքի պաշտպանության միջոցների շրջանակում դիտարկելու հարցում:

Ընդհանրապես իրավաբանական պատասխանատվությունն օրենսդրության և իրավագիտության հիմնական հասկացություններից մեկն է, որը լայնորեն կիրառվում է իրավակիրառ գործունեության ընթացքում: Չնայած դրան՝ իրավաբանական պատասխանատվոթ-

² St'u **Черновол Е. П.**, Возмещение вреда, причиненного незаконными действиями государственных и общественных организаций, а также должностных лиц. Дис. ... канд. Юрид. Наук.-М., 1983, էջ 69:

³ St'u **Элькин П. С.**, Толкование и применение норм уголовно-процессуального права. – М., 1967, էջ 28:

⁴ St'u **Безлепкин Б. Т.**, Возмещение ущерба, причиненного гражданину незаконными действиями органов дознания, предварительного следствия, прокуратуры и суда. М., 1985, էջ 35-38:

յան հասկացությունը չի գտել իր միանշանակ լուծումը և հանդիսա-
նում է համեմատաբար բարդ և վիճելի խնդիրներից մեկը:

Իրավագիտության մեջ իրավաբանական պատասխանատվու-
թյունը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից: Համեմատաբար
լայն տարածում ունեցող մոտեցումներից՝ իրավաբանական պա-
տասխանատվությունն իրավունքի նորմի սանկցիայի իրագործումն
է, քանի որ նորմի սանկցիայի բովանդակությունը հանգում է հակաի-
րավական վարքագծի իրավական հետևանքների սահմանման մեջ⁵:
Սակայն ոչ բոլոր իրավական սանկցիաներով է նախատեսվում իրա-
վաբանական պատասխանատվության միջոց: Օրինակ՝ պարտավո-
րությունների կատարմանը հարկադրելը չի կարող համարվել պա-
տասխանատվության միջոց, հետևաբար ցանկացած սանկցիայի ի-
րագործում չի կարող դիտվել որպես իրավաբանական պատասխա-
նատվության միջոցի կիրառում:

Իրավաբանական պատասխանատվությունը կարելի է բնորոշել
որպես պետական հարկադրանքի միջոցների տարատեսակ, որը կի-
րառվում է իրավախախտում կատարած անձի նկատմամբ և նրա հա-
մար առաջացնում է անձնական, գույքային կամ այլ բնույթի անցան-
կալի հետևանքներ⁶: Ասվածից հետևում է, որ իրավական սանկցիա-
յով նախատեսված միջոցը ավելի լայն հասկացություն է, քան իրա-
վաբանական պատասխանատվության միջոցը, քանի որ սանկցիան,
բացի իրավաբանական պատասխանատվության միջոցներից, կարող
է ներառել նաև պետական հարկադրանքի այլ միջոցներ: Այս հանգա-
մանքը հաշվի առնելով՝ իրավական սանկցիաները ենթարկվում են
դասակարգման: Այդ դասակարգման գլխավոր չափանիշն այն եղա-
նակն է, որի միջոցով նորմը ներգործում է իրավահարաբերության
մասնակիցների վարքագծի վրա: Ելնելով այդ չափանիշից՝ իրավա-
կան սանկցիաները բաժանվում են երկու խմբի՝ իրավավերականգ-
նող, որոնց նպատակը մինչև իրավունքի խախտումը եղած դրության
վերականգնումն է, և տուգանային, պատժիչ, որի նշանակությունը
դրսևորվում է իրավախախտի կամքի վրա ներգործելու մեջ՝ վերջի-
նիս վրա հատուկ պարտականություններ և տարբեր տեսակի իրա-

⁵ Այդ մասին մանրամասն տե՛ս **Лейст О. Э.**, Санкции и ответственность по советскому праву. М., 1981:

⁶ Տե՛ս Гражданское право: учеб.: в 3 т., т. 1. /Е. Н. Абрамова, Н. Н. Аверченко, Ю. Б. Байгушева (и др.); под ред. А. П. Сергеева. – М.: РФ-Пресс, 2009, էջ 941:

վասահմանափակումներ դնելով: Իրավական սանկցիաների վերոհիշյալ դասակարգումը համընկնում է դրանք՝ իրավունքի պաշտպանության և իրավաբանական պատասխանատվության միջոցների բաժանելուն: Պաշտպանության և պատասխանատվության միջոցների համար ընդհանուրն այն է, որ երկուսն էլ ապահովված են պետական հարկադրանքով, սակայն դրանցից յուրաքանչյուրի դեպքում այդ հարկադրանքը տարբեր դրսևորումներ է ունենում: Պաշտպանության միջոցների պարագայում հարկադրանքը կրում է անմիջական բնույթ: Այս դեպքում հարկադրանքի միջոցը և նպատակը համընկնում են, օրինակ՝ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից ետ պահանջելու, կողմերի սկզբնական դրությունը վերականգնելու և այլ դեպքերում: Ինչ վերաբերում է պատասխանատվության միջոցներին, ապա դրանց կիրառման ժամանակ հարկադրանքի միջոցը և նպատակը չեն համընկնում: Այստեղ միջոց է, օրինակ, քրեական պատժի ենթարկելը, որի նպատակը անձի մոտ հետագայում իրավաչափ գործելու կամքի ձևավորումն է: Փաստորեն, պատասխանատվության միջոցը իրավական ներգործություն է ունենում երկու ձևով՝ ուղղակի, որը բնութագրական է պատժիչ միջոցներ կիրառելիս (հարկադրանքի միջոց), և անուղղակի, միջնորդավորված (հարկադրանքի նպատակ), որին հասնում են իրավական ներգործության ուղղակի ձևի օգնությամբ: Հենց անուղղակի հարկադրանքով էլ պատասխանատվության միջոցը տարբերվում է պաշտպանության միջոցից: Եթե ամփոփենք պաշտպանության և պատասխանատվության միջոցների բնութագրական գծերը, ապա կարելի է նշել, որ պաշտպանության միջոցի պարագայում հակաիրավական վարքագիծ դրսևորած անձը իր պարտավորությունների կատարմանը հարկադրվում է տուժողի անմիջական գործողություններով, վերջինիս անմիջական ներգործությամբ: Ինչ վերաբերում է պատասխանատվության միջոցներին, ապա այս դեպքում իրավախախտում կատարած անձի նկատմամբ կիրառվող իրավական ներգործությունն ուղղված է ոչ թե տվյալ պահին վերջինիս պարտավորությունների պատշաճ կատարմանը, այլ միայն հետագայում նրա իրավաչափ վարքագիծը ապահովելուն: Ասվածից ակնհայտ է դառնում, որ իրավաբանական պատասխանատվության միջոցների պարագայում հարկադրանքը հոգեբանական բնույթ է կրում այն առումով, որ դրա վերջնական նպատակի իրագործումը (պատշաճ վարքագծի դրսևորումը) կախված է ոչ միայն և ոչ այնքան

ուղղակի ներգործության միջոցների կիրառումից, որքան իրավախախտում կատարած անձի կամքից: Պաշտպանության միջոցների պարագայում իրավախախտի կամքը որևէ նշանակություն չի ունենում, և հարկադրանքի նպատակին հասնելը կախված չէ նրա կամքից: Պատասխանատվության միջոցի բուն էությունն այն է, որ գույքային, անձնական կամ այլ բնույթի պատժիչ միջոցների գործադրմամբ ապահովվում է իրավախախտում կատարած անձի հետագա իրավաչափ վարքագիծը: Հետևաբար իրավաբանական պատասխանատվության բնորոշ գծերից է դրա՝ պատժիչ գործառույթ իրականացնելու հանգամանքը:

Քաղաքացիաիրավական պատասխանատվությանը՝ որպես իրավաբանական պատասխանատվության տեսակի, բնականաբար, բնորոշ են իրավաբանական պատասխանատվությանը հատուկ բոլոր ընդհանուր գծերը: Հետևաբար, եթե վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը համարենք քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց, ապա կստացվի հետևյալ իրավիճակը. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածն ամրագրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Սահմանադրական հիշյալ նորմի բովանդակությունից բխում է, որ պետական, այդ թվում՝ վարչական մարմինները հատակ պետք է իմանան, թե ինչ պետք է անեն և ինչ չեն կարող անել: Ի վերջո, պետությունը և վերջինիս պատկանող լիազորություններն իրականացնող պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավունքի հասարակ սուբյեկտներ չեն, և վերջիններիս կարգավիճակի բնույթով ու պետաիշխանական լիազորություններով պայմանավորված՝ նրանց առաջադրվում է իրենց հնարավոր և պարտադիր վարքագծի շրջանակների միանշանակ իմացության պահաջ: Նման պայմաններում, բնականաբար, վնաս պատճառած վարչական մարմնի կողմից վնասի հատուցումը չի կարող դիտվել որպես վերջինիս նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոց: Պատասխանատվության միջոցների կիրառմանը բնութագրական անուղղակի՝ միջնորդավորված ներգործություն՝ որպես պատասխանատվության միջոցի կիրառման վերջնական նպատակ, տվյալ դեպքում առկա լինել չի կարող, քանի որ հակառակ պարագայում կստացվի, որ դրա-

նով մենք փորձում ենք պետական մարմնի կամ պաշտոնատար անձի մոտ ձևավորել հետագայում իրավաչափ գործելու կամք: Այդ դեպքում կատարվի, որ իրավաչափ գործելու կամքի ձևավորման նպատակ հետապնդելով՝ մենք ընդունում ենք տվյալ պահին պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց մոտ նման կամքի բացակայությունը, որպիսի հանգամանքը, բնականաբար, հակասում է իրավական պետության բոլոր սկզբունքներին և խարխլում դրա հիմքերը:

Հայտնի է, որ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը կարող է առաջանալ միայն որոշակի հանգամանքների առկայության պարագայում: Այն հանգամանքները, որոնց առկայության պայմաններում կարող է կիրառվել քաղաքացիաիրավական պատասխանատվություն, անվանվում են պատասխանատվության հիմքեր: Այդպիսի հիմք, առաջին հերթին, հանդիսանում է իրավախախտում կատարելը, սակայն իրավախախտումից բացի, անհրաժեշտ են նաև որոշակի այլ պայմաններ, դրանք են՝ 1) վարքագծի հակաիրավական բնույթը, 2) տուժողի մոտ վնասների առաջացումը, 3) պատճառական կապը հակաիրավական վարքագծի և վնասների միջև, 4) իրավախախտում կատարած անձի մեղքը: Վերոհիշյալ պայմանների ամբողջությունը, անհրաժեշտ է կոնկրետ անձի նկատմամբ քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառման համար և անվանվում է քաղաքացիական իրավախախտման կազմ: Այս պայմաններից յուրաքանչյուրի բացակայությունը բացառում է քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցների կիրառման հնարավորությունը:

Իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ առանձին դեպքերում քաղաքացիաիրավական պատասխանատվություն կարող է առաջանալ նաև անկախ վնասների առկայությունից⁷: Մենք ամբողջովին ընդունում ենք այդ տեսակետը, քանի որ վնասների առաջացումը քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման անհրաժեշտ պայման համարելու դեպքում որևէ կերպ քաղաքացիաիրավական պատասխանատվության ինստիտուտի շրջանակներում հնարավոր չէր լինի տեղավորել պարտա-

⁷ См'у Гражданское право. В 4 т., т. 1: Общая часть: учеб. для студентов вузов; отв. ред. – Е. А. Суханов. – 3-е изд., перераб. и доп. – М.: Волтерс Клувер, 2010. С. 602:

պանի կողմից տուժանքի վճարումը, օրինակ, կետանց թույլ տալու այն դեպքերում, երբ կետանցի հետևանքով պարտատերը վնաս չի կրել: Հետևաբար, եթե քաղաքացիաիրավական պատասխանատվությունը հնարավոր է նաև առանց վնասների, ապա վնասների հատուցումը չի կարող դիտվել որպես քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց:

Ավելին, քաղաքացիական իրավունքում որևէ մեկին անձնական կամ գույքային վնաս պատճառելն արդեն իսկ հանդիսանում է իրավախախտում: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածը սահմանում է, որ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Փաստորեն, ստացվում է, որ վնաս պատճառած անձի կողմից վնասի պատճառման մեջ իր անմեղության ապացուցումը նրա արարքը դարձնում է իրավաչափ, մինչդեռ վարչարարությամբ պատճառված վնասի պարագայում գործում է միանգամայն այլ կանոն: Վարչարարության իրականացման արդյունքում առաջացած վնասները որևէ կերպ չեն ազդում վարչարարության իրավաչափության վրա, և վնասների առկայությունը ամենևին չի վկայում իրականացված վարչարարության ոչ իրավաչափ լինելու մասին: Հետևաբար վարչական մարմինը կամ դրա պաշտոնատար անձը խնդիր չունի ապացուցելու իր մեղքի բացակայությունը վարչարարության արդյունքում առաջացած վնասի մեջ, քանի որ նրանց գործողությունների իրավաչափությունը կախված չէ ոչ պատճառված վնասի մեջ նրանց մեղքի բացակայությունից, ոչ էլ ընդհանրապես վնասների առկայությունից կամ բացակայությունից: Վարչարարության իրավաչափության հարցը ենթակա է լուծման օրենքով նախատեսված պահանջներին դրա համապատասխանության գնահատման տեսանկյունից: Այս առումով մենք կիսում ենք Միխայլենկոյի այն մոտեցումը, որի համաձայն՝ վարչական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց դեպքում վերջիններիս մեղքի հարցը վնասի պատճառման ոլորտից տեղափոխվում է արարքի հակաիրավականության դաշտ⁸: Ասվածի իմաստն այն է, որ վարչական մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք, ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի ուժով նախա-

⁸ Տե՛ս **Михайленко О. В.**, Имущественная ответственность за вред, причиненный осуществлением публичной власти: теоретические аспекты и проблемы ее реализации на практике. – «Волтерс Клувер», 2007 г., էջ 61:

պես իմանալով իրենց լիազորությունների շրջանակը և դրանց իրականացման կարգը, հակաիրավական արարք կատարելու պահին արդեն իսկ գիտեն դրա ոչ իրավաչափ լինելու մասին, հետևաբար ցանկացած հակաիրավական արարք կատարվում է մեղավորությամբ: Ելնելով վերոնշյալից՝ կարելի է եզրահանգել, որ վարչարարությամբ պատճառված վնասի դեպքում մեղքը ներառվում է արարքի հակաիրավականության մեջ:

Այսպիսով, որպես ամբողջ վերոշարադրյալի ամփոփում՝ կարելի է եզրակացնել, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը իր հատկանիշներով չի համապատասխանում քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ պայմաններին, ուստի համարվում է ոչ թե քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց, այլ՝ օբյեկտիվ-քաղաքական օրինաչափություններից, սոցիալ-բարոյական պատկերացումներից և ընդհանրապես պետության խնդիրներից բխող՝ վնասը հատուցելու վերջինիս պարտականություն⁹: Նշվածը առավել ամբողջական է դառնում այն համատեքստում, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավական կարգավորմանը նվիրված Օրենքի 7-րդ բաժնի դրույթների համադրված վերլուծությունից կարելի է գալ այն եզրահանգման, որ Օրենքը ևս վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը չի դիտում որպես պատասխանատվության միջոց: Խնդիրն այն է, որ վնասի հատուցում պահանջելու իրավունքի ծագման համար, նախևառաջ, անհրաժեշտ է վարչարարության ոչ իրավաչափ ճանաչում: Օրենքով նախանշված ուղղությամբ է զարգացել նաև ՀՀ դատական պրակտիկան: Մասնավորապես՝ ՀՀ վճռաբեկ դատարանը մի շարք գործերով կայացրած իր որոշումներով այն իրավական դիրքորոշումն է արտահայտել, որ վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու և դրանով պատճառված վնասի հատուցում տրամադրելու վերաբերյալ պահանջները չեն կարող ներկայացվել միաժամանակ, և վնասի հատուցում պահանջելու համար անհրաժեշտ է նախապես ոչ իրավաչափ ճանաչել վարչարարությունը¹⁰: Նման իրավակարգավորման, ինչպես նաև ՀՀ դատական

⁹ Տե՛ս **Подопригора А. А.**, Реабилитация в уголовном процессе России. Дисс. канд. юрид. наук. Ростов-на-Дону. 2004, էջ 4:

¹⁰ Տե՛ս, օրինակ, ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0277/05/09 վարչական գործով 03.12.2010 թ. որոշումը:

պրակտիկայի՝ այդ ուղղությամբ զարգացման հիմքում կարելի է գտնել այն տրամաբանությունը, որ եթե վարչարարությունը, որով անձին պատճառվել է վնաս, ոչ իրավաչափ է ճանաչվել, ապա վնասի պատճառումն արդեն իսկ ենթադրում է այն հատուցելու պետության պարտականությունը: Այդ պարտականությունը բխում է պետության՝ որպես իրավունքի հատուկ սուբյեկտի կարգավիճակից: Հենց դրանում է դրսևորվում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման՝ իրավունքի պաշտպանության միջոցներին ներհատուկ իրավավերականգնողական գործառույթի էությունը:

Որպես հավելում՝ տեղին է նաև նշել, որ Օրենքով իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հնարավորության ամրագրումն արդեն իսկ ինքնին բացառում է այս վնասի հատուցումը քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոց համարելու հնարավորությունը:

Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման կապակցությամբ ծագող հարաբերությունների հանրային-իրավական բնույթը հաստատվում է նաև նրանով, որ այս հարաբերությունները օժտված են հանրային իրավահարաբերություններին բնորոշ բոլոր առանձնահատկություններով: Նշվածը հիմնավորելու նպատակով անհրաժեշտ է բացահայտել հանրային և մասնավոր իրավահարաբերությունների առանձնահատուկ գծերը և դրանք միմյանցից սահմանազատելու չափանիշները:

Ընդհանուր ձևով մասնավոր իրավունքը կարելի է բնորոշել որպես իրավական նորմերի համակցություն, որոնք ուղղված են մասնավոր անձանց միջև առաջացող հարաբերությունների կարգավորմանը, իսկ հանրային իրավունքը կազմում են պետական մարմինների գործունեության կարգը սահմանող նորմերը: Ասվածից հետևում է, որ իրավանորմերը հանրայինի կամ մասնավորի դասակարգելու հիմքերը հասարակության մեջ դրանց իրականացրած դերը և դրանցով պաշտպանվող շահերի բնույթն են: Վերոհիշյալով պայմանավորված՝ կարելի է առանձնացնել հանրային և մասնավոր իրավունքները միմյանցից տարանջատող հետևյալ առանձնահատկությունները. հանրային և մասնավոր իրավահարաբերությունների հիմնական տարբերությունը կապված է պետական իշխանության սուբյեկտի անմիջական մասնակցության հետ: Այդ կապակցությամբ Տարանվակիս պնդում է, որ հանրային են այն իրավահարաբերությունները, որոնց

պարտադիր կարգով մասնակցում է պետությունը (իր մարմինների միջոցով)՝ որպես հարկադիր իշխանության կրող, իսկ մասնավոր իրավահարաբերություններում պետության մասնակցությունը բացակայում է, կամ եթե վերջինս մասնակցում է, ապա մյուս սուբյեկտների հետ հավասար հիմունքներով՝ որպես պարզապես գույքային շահերի, այլ ոչ որպես պետական հարկադիր իշխանության կրող¹¹: Այսպիսով, հանրային իրավահարաբերությունների գլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ այս իրավահարաբերությունների պարտադիր մասնակից է հանդիսանում պետաիշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը: Որպես այդպիսին հանդիսանում է պետությունը, սակայն հարկ է նկատի ունենալ, որ ընդհանրապես իրավահարաբերություններին պետությունը չի կարող մասնակցել անմիջականորեն: Հանրային իրավահարաբերության շրջանակներում կոնկրետ պետաիշխանական բնույթի լիազորությունները պետության անունից իրականացնում է այս կամ այն պետական մարմինը, որը, ըստ էության, հանդես է գալիս որպես կապող օղակ պետության և հանրային իրավահարաբերության մյուս մասնակցի միջև: Ասվածից բխում է, որ կոնկրետ իրավահարաբերությանը մասնակցող պետական մարմինը ոչ թե սեփական, այլ պետությանը պատկանող լիազորություններն է իրականացնում, և այս տեսանկյունից այդ լիազորությունների իրականացումը նրա համար ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Ինչ վերաբերում է մասնավոր-իրավական հարաբերություններին, ապա այստեղ իրավահարաբերության մասնակիցներն իրենք են հանդիսանում իրենց լիազորությունների տնօրինողները: Պետաիշխանական լիազորությունների իրականացման կարգը հստակ սահմանված է օրենքով, և այդ կարգից շեղումներ չեն թույլատրվում, մինչդեռ մասնավոր իրավահարաբերությունների պարագայում դրանց մասնակիցները ինքնուրույն են և սեփական հայեցողությամբ են որոշում իրենց իրավունքներից օգտվելու հարցը: Այլ կերպ ասած՝ մասնավոր իրավահարաբերության մասնակցի վրա չի կարող դրվել իրեն պատկանող իրավունքից օգտվելու պարտականություն, մինչդեռ պետաիշխանական լիազորությունների սուբյեկտի համար տվյալ լիազորության իրականացումը նաև պարտականությո-

¹¹ Տե՛ս **Тарановский Ф. В.**, Энциклопедия права. 3-е изд.- СПб.: Издательство «Лань», 2001, էջ 560:

յուն է: Հանրային իրավահարաբերությանը պետաիշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի պարտադիր մասնակցության հատկանիշը պայմանավորում է այս իրավահարաբերությունների մյուս առանձնահատկությունը. հանրային իրավահարաբերության մասնակիցներն իրավաբանորեն հավասար չեն: Այստեղ կողմերից մեկը հանդես է գալիս թելադրողի, իսկ մյուսը՝ կատարողի դերում: Մասնավոր իրավահարաբերություններում մասնակիցներն իրավաբանորեն հավասար են: Ինչպես նշում է Բլինը, մասնավոր իրավահարաբերության կողմերից որևէ մեկը չի ենթարկվում մյուսին, սակայն հարկ է նկատել, որ նրանք երկուսն էլ այս պարագայում ենթարկվում են իրենց միջև առաջացած իրավահարաբերության շրջանակներից դուրս գտնվող երրորդ կողմին՝ պետությանը, որը ընդհանուր գծերով որոշում է մասնավոր իրավահարաբերության բովանդակության սահմանները, և որին կարող են դիմել մասնավոր իրավահարաբերության կողմերը՝ իրենց միջև ծագած վեճերը լուծելու նպատակով¹² և այստեղ է դրսևորվում հանրային-իրավական և մասնավոր-իրավական կարգավորման մեթոդների տարբերությունը: Հանրային իրավունքում գործում է իմպերատիվ կարգավորման մեթոդը, մասնավորում՝ դիսպոզիտիվ: Մասնավոր իրավահարաբերությունների կամ դիսպոզիտիվ իրավական կարգավորման դեպքում պետությունը որոշում է այն ընդհանուր սահմանները, որոնց շրջանակներում կոնկրետ իրավահարաբերության մասնակիցները հնարավորություն ունեն ընտրելու իրենց թույլատրելի վարքագծի տարբերակները: Օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում մեծ թիվ են կազմում դիսպոզիտիվ նորմերը, որոնցով սահմանված կարգը գործում է միայն այն դեպքում, երբ այդ նորմով կարգավորվող կոնկրետ նյութական իրավահարաբերության մասնակիցներն իրենց միջև ձեռք բերված համաձայնությամբ նորմով սահմանված կարգից տարբերվող կարգ չեն նախատեսել: Ինչ վերաբերում է հանրային իրավունքում գործող իմպերատիվ կարգավորման մեթոդին, ապա կոնկրետ հանրային իրավահարաբերության մասնակիցները իրենց վարքագծի տարբերակը ընտրելու հնարավորություն չունեն: Պետաիշխանական լիազորությունների իրականացումը կրում է պարտադիր բնույթ, հստակ սահ-

¹² См. у Ильин И. А., Общее учение о праве и государстве. О сущности правосознания. Том 4. Москва, էջ 106:

մանված է այդ լիազորությունների իրականացման ընթացակարգը, և կողմերը չեն կարող հրաժարվել այդ լիազորությունների իրականացումից կամ ընտրել դրանց իրականացման օրենքով նախատեսվածից այլ տարբերակ: Այստեղ տեղին է նաև նշել, որ Բեկբաևի պնդմամբ մասնավոր իրավահարաբերությունների առաջացման համար պահանջվում է երկու կողմերի կամքի համաձայնեցում, մինչդեռ հանրային իրավահարաբերությունների պարագայում մեկ կողմի կամքը արդեն իսկ բավարար է իրավահարաբերության առաջացման համար¹³: Այս առումով հատկանշական է, որ ըստ Լուպարևի և համահեղինակների՝ սուբյեկտիվ հանրային իրավունքի իրականացման համար անհրաժեշտ է պետաիշխանական բնույթի լիազորություններով օժտված սուբյեկտի առկայություն: Որպես մասնավոր օրինակ՝ նկարագրվում է այն իրավիճակը, երբ որևէ տրանսպորտային միջոցի վարորդ խնդրանքով դիմում է ճանապարհային ոստիկանության տեսուչին, որպեսզի վերջինս կանխի մեկ այլ վարորդի կողմից երթևեկության կանոնների շարունակական խախտումները¹⁴:

Ընդհանրացնելով հանրային իրավահարաբերությունների առանձնահատկությունները՝ կարելի է գալ այն համոզման, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման շուրջ ծագող հարաբերությունները աչքի են ընկնում հանրային իրավահարաբերություններին բնութագրական վերոհիշյալ հատկանիշներով: Մասնավորապես՝ քննարկվող իրավահարաբերության պարտադիր մասնակից է հանդիսանում վնաս պատճառած վարչական մարմինը՝ օժտված պետաիշխանական լիազորություններով, այդ մարմնի և վնաս կրած անձի միջև հարաբերության առաջացման համար անհրաժեշտ և բավարար է միայն տուժողի կողմից վնասի հատուցում տրամադրելու վերաբերյալ դիմումի ներկայացումը, այսինքն՝ չի պահանջվում նաև իրավահարաբերության երկու կողմերի կամքի համաձայնեցում, և վարչական մարմին համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում վերջինս պարտավոր է իրականացնել վնասի հատուցման կապակցությամբ իր պետաիշխանական լիազորությունները, և, վերջապես, տուժողի՝ վնասի հատուցում ստանալու իրավունքի իրականա-

¹³ Տե՛ս **Бекбаев Е. З.**, Проблема начала в теоретическом познании правовой системы (попытка обоснования). Астана. 2009, էջ 101:

¹⁴ Տե՛ս **Лупарев Е.Б., Добробаба М.Б., Мокина Т.В.**, Общая теория публичных правоотношений: монография, էջ 263:

ցումը կարող է ապահովվել միայն վարչական մարմնի անմիջական մասնակցությամբ, քանի որ Օրենքով վերջինիս վնասի հատուցման վերաբերյալ դիմումի ներկայացումը համարվում է անհրաժեշտ պայման: Անհրաժեշտ է նաև նշել, որ Օրենքով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու գործընթացը ինքնին համարվում է վարչարարություն, որը եզրափակվում է հատուցման պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ վարչական ակտի ընդունմամբ: Իսկ վարչական ակտը հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով ընդունվող անհատական իրավական ակտ է, հետևաբար վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը պատկանում է հանրային իրավունքի ոլորտին:

Որպես ամբողջ ասվածի ամփոփում՝ տեղին է վկայակոչել թիվ ԵՔԴ/0736/02/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.10.2010 թ. որոշումը, որում արձանագրվել է հետևյալը. քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ, հետևաբար վարչարարությամբ պատճառված վնասը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և Օրենքի 7-րդ բաժնի դրույթներով չի կարող նույնացվել քաղաքացիական իրավահարաբերությունների ընթացքում առաջացող վնասին: Վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունները կարգավորվում են բացառապես Օրենքով, քանի որ տվյալ դեպքում առկա է հանրային իրավահարաբերություններից բխող վեճ:

Паргев Сароян

Аспирант кафедры конституционного права ЕГУ

ПРАВОВЫЕ ОСНОВЫ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА УЩЕРБ, ПРИЧИНЕННЫЙ АДМИНИСТРИРОВАНИЕМ

В любом правовом государстве необходимой стороной защиты прав и свобод человека и гражданина является их защита от незаконных действий государственных органов. Это обусловлено также тем, что именно осуществление властных действий содержит угрозу причинения ущерба, однако факт причинения ущерба сам по себе не предопределяет противозаконность действий государственного органа, соответственно чрезвычайно важную значимость приобретает рассмотрение эффективных законодательных механизмов получения возмещения ущерба, причиненного незаконными действиями государственных органов или их должностных лиц, в том числе неправомерным администрированием. Однако, необходимо отметить, что законодательством РА предусмотрены противоречивые способы регулирования обсуждаемой проблемы, что, в первую очередь, обуславливается отсутствием единых правовых основ возмещения ущерба, причиненного администрированием. Данные правоотношения регулируются различными правовыми актами, что может привести к формирования отсутствия общей судебной практики. Именно по этой причине мы сделали попытку разъяснения правового характера норм, регулирующих отношения, связанные с возмещением ущерба, причиненного администрированием и исходя из этого, уточнения правовых основ ответственности за причиненный администрированием ущерб.

Pargev Saroyan

PHD student of the YSU Chair of Constitutional Law

THE LEGAL BASES OF RESPONSIBILITY FOR THE DAMAGE CAUSED BY ADMINISTRATIVE PROCEDURE

In every state governed by law one of the essential aspects of the protection of human rights and freedoms is their defense from the illegal actions of state bodies. It is conditioned by the fact that even the fulfillment of actions by state bodies is somehow dangerous, but the fact of

inflicting damage in itself does not predict the unlawfulness of actions fulfilled by state bodies, that's why it is extremely important to provide effective legislative mechanisms for getting compensation against the damage caused by illegal administrative procedure. But it's necessary to state that the legislation of the Republic of Armenia anticipates contradictory regulation of the issue under discussion, which, first and foremost, is revealed by the absence of united legal bases for the compensation of damages caused by administrative procedure. Those relations are regulated by various legal acts, which can lead to the formation of non-united judicial practice. This is the reason that we have tried to find out legal nature of norms regulating the relations for compensating the damages caused by administrative procedure, and to clarify the legal bases for the responsibility caused by administrative procedure.

Բանալի բառեր՝ վարչարարությանը պատճառված վնաս, իրավունքի պաշտպանության միջոց, իրավաբանական պատասխանատվության միջոց, իրավական սանկցիա, հանրային իրավահարաբերություններ, մասնավոր իրավահարաբերություններ, պետաիշխանական բնույթի լիազորություններ:

Ключевые слова: *ущерб причиненный администрированием, средство защиты права, средство юридической ответственности, правовая санкция, публичные правоотношения, частные правоотношения, полномочия государственно-властного характера.*

Key words: *damages caused by administrative procedure, means for the protection of rights, legal responsibility means, legal sanction, public legal relations, private legal relations, state-authority authorizations.*